№ 179 Հոկտեմբերի 9 (21) 1880 Հոկտեմբերի 9 (21) № 179

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թանգութեան մասին:—Ներքին տեսութիւն: Նամակ Աւէքսանդրօպոլից: Նամակ Բագուից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Գոլոս» լրագրի թղթակցութիւնը: Անգլիա: Նամակ Պարսկաստանից:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Բանասիրական: Քաղուածք մի ձեռագիր յիշատակարանից:

ԹԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գուցէ ամբողջ Ռուսաստանում ոչ մի քաղաք չը կայ, որի մէջ կեանքը այնքան թանգ լինէր, որքան Թիֆլիսում: Ու զարմանալին այն է, որ թանգութիւնը այստեղ վերաբերվում է ոչ թէ միայն շռայլութեան առարկաներին, արտասահմանից բերվող ապրանքներին կամ նիւթերին, որոնք չեն արդիւնաբերվում մեզանում, բայց նոյն իսկ երկրիս ամենահարկաւոր արդիւնքները, ամենօրեայ, կենսական պահանջ ներկայացնող մթերքները սաստիկ թանգ են այստեղ: Միսը, կաթը, հացը, հաւը, բանջարեղէնները,—բոլորը սաստիկ թանգ է և գրեթէ անմատչելի է միջին կարողութեան տէր ընտանիքին, ուր մնայ չքաւորներին:

Քաղաքային վարչութիւնը ամեն ջանք է անում տակսա նշանակելու առաջին, ամենաանհրաժեշտ պիտոյքի մթերքների վրա,—բայց դժբաղդաբար այդ ոչինչ չէ օգնում և առնողը դարձեալ տակսայի գնից բարձր է առնում ամեն նիւթերը:

Թիֆլիսը շրջապատող գիւղերը շատ աղքատ և գրեթէ ոչինչ չարդիւնաբերող գիւղեր են: Գիւղական ազգաբնակութիւնը քաղաքին մօտակայ գիւղերում ծոյլ է և սեփական ինիցիատիվից զուրկ է արդիւնաբերութեան գործի մէջ: Բացի սորանից գիւղերը և քաղաքը կապված չեն յարմար ճանապարհներով: Մի խօսքով գիւղական արդիւնաբերութեան չափը չէ համապատասխանում քաղաքի առօրեայ կենսական պահանջի չափին:

Մենք միշտ ասել ենք և դարձեալ կը կրկնենք որ կամ մեր քաղաքային վարչութիւնը պէտք է հիմնի մի գիւղական արդիւնաբերող ընկերութիւն, որպէս զի գիւղական արդիւնքները կարողանային անմիջապէս գիւղերից հասցրած լինել քաղաք, կամ պէտք է կազմվի կապիտալիստների մի արդիւնաբերող բաժանորդական ընկերութիւն նոյն նպատակով: Մեր գիւղական ազգաբնակութիւնը չունի իր սեփական ինիցիատիվը, պէտք է նրան արուեստական միջոցներով դուրս բերել թմրած դրութիւնից: Եթէ ոչ, թանգութիւնը դեռ երկար ժամանակ կը տիրէ մեզանում: Դա հրէշաւոր երևոյթ չէ, արդեօք, որ Ընդրկովկասի պէս մի հարուստ երկրում առաջին հարկաւորութեան բնական մթերքները աւելի թանգ են, քան թէ Ռուսաստանի հեռու հիւսիսումն անգամ և կեանքը Թիֆլիսում, այդ պատճառով, աւելի թանգ է քան թէ Ս. Պետերբուրգում և Մոսկվայում: Այդ բանի վրա միթէ մենք չենք մտածում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Սեպտեմբերի 22

Կովկասում հայ երիտասարդութիւնը գաւառական քաղաքներում անգործ չէ: Հայ երիտասարդութիւնը մի պաշտելի գաղափար ըմբռնեց, դա է ազգային բարոյական միութեան սկզբունքը: Երիտասարդութիւնը եթէ ապրում է ուսուցչութեամբ, նա համակրում է կրթութեան գործին բոլոր դաւանութիւններին պատկանող հայերի մէջ, առանց խտրութեան: Գաւառական երիտասարդութեան ամենաջերմ ազգասիրական գործի օրինակ և վկայ կարող է լինել այն համակրական գործը, որ լրագրութիւնը առաջարկեց՝ թիւրքաց Հայաստանի սովեալների վերաբերութեամբ:

Կան ի հարկէ դէպքեր, երբ գաւառական երիտասարդութիւնը չէ հասկանում իր նշանակութիւնը, բայց դա մի բացառական երևոյթ է: Բայց ամեն մի նորութիւն, ամեն մի թարմ, ժամանակակից ազատ համոզմունք հակառակութիւն է գտնում հոգևորականների կողմից, լինէին նրանք լուսաւորչականներ թէ կաթոլիկներ:

Կան հազարաւոր իրողութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ երիտասարդական խումբը կամեցել է որ և է բարի նպատակով գործ կատարել, բայց այդ նրա ջանքերի հակառակողը և արգելողը եղել է հոգևորականը:

Հոգևորական դասի անզգայ կեանքը դէպի ազգային գործը ապացուցված իրողութիւն է, որ կը խոստովանեն և լուսաւորչական և կաթոլիկ հայերը: Ներկայ ժամանակում մենք ի հարկէ մեծ գործողութիւն կարող էինք յուսալ հոգևորական դասից, բայց դժբաղդաբար, նրանց մտաւոր զարգացողութեան շրջանը առանձնապէս կենտրոնացած է մի յայտնի գաղափարի մէջ, որի համար ազգային միութիւնը ամենաշնասակար իրողութիւնն է: Այդ նոցա չափազանց եսական յատկանիշը, և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

—

Դ.

«Ծաներ կուսիս մէջ, էլ անկար երեխայ չէի համարվում. երբ հալչոցն ընկնում էր և երկիրն ըսկըսում էր իւր ծոցէն գոյն հանել, բացվում էին գոմի դռները, եզը իւր սալը, իւր այդ կարծր անկողինը թողած՝ մղալով դուրս էր վազում, խընդապատար տուչիկ անում և մերթ գոռալով ծնկի ընկած՝ եղիւրներովն հող էր հանում դէպի երկինն, փուլ անում. այդ ժամանակ իմ ձեռքս տրվում էր բարակ և կակուղ վարոցը, եզներու կառավարն էի դառնում. իմ իշխանութեանս ներքոյ նոքա գնում էին ջուրն՝ ու յետ գալիս, քշվում էին այս և այն կողմ ձներու մէջ՝ որ թեները խամէ ելնին, բացուին. դերան էին քաշում, դատարկ սայլին էին լծվում և կակուղ ձնի մէջ սայլը պտրտեցնում: Ցանքի համար ամեն բան պատրաստ է. աբրն ու խոփը, փոկն ու գնիլը, սարկաղն ու կանտրիւը, լուծն ու փքին, սամին ու սամետէն, մանկեռն ու տափանը՝ իրենց թեներով, իրենց պարոյներով. տէրտէրը սերմն օրհնել է: Լուսոյ Աստղը ծագում է, հողագործը թողնում է իւր ամուսնու ջերմիկ անկողինը. բոլոր տունը, բացի շատ փոքրերէն, ոտքի վրա է. ամեն բան սարքի ու կարգի է դրվում. սայլը լորխում ու լծում են, սերմը վրէն են դնում, նաև առաւօտեան ակրատը և օրուայ խմելու ջուրը կժերով կամ փարչերով, և եզներու խոտը: Արօրները ձգում են լծերու վրա և մաճերը օրօրվում են օդի մէջ, համբայ տան չորս հինգ մաճը, միջակ երկուս կամ երեքը, աղքատի մէկը. ցանքուորը գնում է արտը: Սերմանացանը, մեծ մաճկալը, քաշում է կորիները, լիաբուռն ցանում է սերմը, պատառվում է ակօսը, հողագործի կեանքն ու յոյսը արդէն հողի տակ է, բայց մի օր փառաւոր յարութիւն պիտի առնէ. այսօր ընկած է, վաղը կը կանգնի. մշակի արդար քրտինքը օծումն է, կենարար ցող է իւր ձգած սերմի համար:

«Ինչպէս ցուրտ էր անում առաւօտները. ձեռներս քցմում էին, որ հաղիւ բռնում էի վարոցը. քթիս ջրերը վազում էին, ոտներս մրսում, լեզուս կապվում, կապուտ լեղակ էի կտրում. հաղիւ կարողանում էի չօ ասել հորքի եզներուն՝ որոնց լծի վրա նստում էի, մէկ ոտքս զնճլին դրած, միւսս կախ: Բայց, հոգուն մեռնիմ շէկ տղին, մի քանի տիգաչափ բարձրանում էր թէ չէ կապոյտ կամարի վրա՝ ջերն ընկնում էր, ոտք ու ձեռքս բացվում էին, լեզուս արձակվում էր, գոյնս կարմրում. իսկ երբ մօտենում էր միջակէտին, մաճկալս իւր հալաը թափում էր վրայէն, մնում էր շապկանց, մինչև անգամ վարտիքն էլ հանում էր, և նոր Ադամն իւր քրտինքով երդմնեցնում էր փշաբեր հողը, որ բարութեան արդիւնք բուսցնէ: Ո՜հ, ինչպէս ծիծաղում էի այն ժամանակ՝ երբ մաճկլիս շապկի փէշն երբեմն ձեռքի անընդգատ շարժուածքէն թէ հով թրթռմունքէն բացվում էր. ուրախութեանս չափ չը կար. ինքն էլ էր հետս ծիծաղում ու ուրախանում ու ակօսի մէջ ցնծութեամբ վեր թռնում:

«Ցանքն աւարտած, իմ պաշտօնս էր, քաղցր պաշտօն, գառներ արածել և ընկեր աղջկներուս ու տղոց հետ էծէծ խաղալը: Ամեն մէկս այնքան կորանում էինք դէպի դեսին, որ ձեռներս եթէ թողնէինք, հողին կառնէր. գլուխներս աւելի կախ, և սրունքներու բացուածքէն աչքը նայում էր դէպի ետև՝ հեռուն. աղջիկներն իրենց Լանի և առջևի փէշերը ձախու բռի մէջ ժողոված և սրունքներու մէջ դէպի վեր բռնած, տղէքս էլ մերը նոյնպէս արած, սկսում էինք խաղը. բոլորս համաժամանակ չէինք անում այդ բանը, այլ՝ նախ մէկը, ապա միւսը և այդպէս մինչև վերջինը: Այս էր խաղը. մի որոշ տեղէ, առաջին խաղացողը, ասածս դրութեամբ, աջու ձեռով իւր շիտակ ու թեթև վարոցը սրունքներու միջէն ամենայն թափով նետում էր. նորա ետևէն գալիս էր երկրորդը, և իւրն էր նետում մի և նոյն ուղղութեամբ թէև վարոցը երբեմն խոտորվում էր գծէն՝ նետողի ճարպիկութեան պակասութենէն. երբ բոլորս նետում պրծնում էինք, նա, որի վարոցը ամենքինէն քիչ էր գնացել հեռու, սկսեալ իւրինէն պարտաւոր էր բոլոր վարոցները ձեռքում ժողովել անդադար ասելով էծէծ բառը բարձրաձայն և առանց երկրորդ անգամ շունչ առնելու, և բերել որոշեալ տեղը հասցնել. եթէ աջողութեամբ գլուխ հանէր գործը՝ ազատվում էր, և խաղը սկսվում էր նորից նորոյ. իսկ եթէ շունչը կիսաճամբու հատնէր, խաղընկերներէն մէկը նմանօրինակ մի նետընկէցութիւն դարձեալ անում էր, և ուր ընկնում էր փայտը՝ այնտեղ մի այլ ընկեր հասնում և դեսին էր խրեցնում այն, և խաղ կորցնողի ազախճինը այնոր ծայրին դնում. սա այս անգամ փորձ պիտի փորձէր սկզբի տեղէն նշան առնել և գդակը վայր բերել, որն անելու համար սկսում էր ժողոված մականները մէկ մէկ դէպի նշանն արձակել, բայց ոչ այնպէս՝ ինչպէս ձիարշաւ կամ հետի մականախաղի ժամանակ են անում, այլինքն փայտի մէջ տեղէն բռնելով ու սուրացնելով իբրև նետ, այլ՝ բռնում էր մէկ ծայրէն և լորտում էր, ինչ դիրքով երթար երթար, բաւական էր որ կախուած տեղէն վայր ձգէր գտակը. ապա թէև այդ չաջողէր, մրցողներն, որ արդէն իւրաքանչիւրը հետզհետէ տէր էին եղել իրենց փայտին՝ սորա անօգուտ դէպի նշանը նետուելէն վերջը, պատրաստ կանգնած, և նախ՝ ցցուած փայտի տէրն հանելով իւր փայտն՝ ու գտակը գետին նետելով և, եթէ պատահէր, առաջին հարուածն էլ ինքը տալով աղքատ գլխանոցին, միւսներն հասնող հասնողի՝ դրբը էր որ տալիս էին և յաղթուողի գլխարկը մերթ ճախրուելով օդի միջէն էր թռչում՝ ամպերի հետ խաղում, մերթ գետնի երեսէն այս ու այն կողմ սուրում և նա որ անաջող էր արել թեի, շնչի և աչքի փորձը, յետին անգամ ոտի փորձն էր անում. վազում էր որ հասնի՝ գլխու զարդն ազատէ. եթէ այդտեղ էլ խեղճ գտնուէր, վերջիվերջոյ գտնվում էր մի բարեհոգի ընկեր որ բանն այնպէս էր դարձնում՝ որ գդակն էր գնում իւր տէրը գտնում: Մանուկ դառնարածներս ուրիշ կրթանքներ էլ ունէինք. մեր խաղամրցութեան ասպարէզի ծրագիրը հարուստ էր:

«Գետնառիւծին նման, որի համար ասում են թէ ստէպ գոյնը փոխում է, իմ էլ վիճակս էր փոխուում. գառնառած, ապա հօտաղ, եղնարած, փոցխաւոր, կամ քշող, սայլավար, ապա հովիւ՝ երբ մշտական հովիւ քրդերը քաշուել գնացել են: Դաշտային պաշտօններէն աւելի ըղձալին ինձ համար դա էր: Հովուի ցուպը մատաղաշ ձեռքումդ, մախաղը կռնակդ զարկած, ականջներդ ու գլուխդ տաք կապած, տրեխներդ լաւ խոտած, թափառ գնում ես հօրդ ոչխարի ետևէն դաշտերու ընդարձակութեան մէջ, բլրներու լանջի գագաթան վրա, ձորերու խորութեան մէջ. հովուի պատկերն ես ուզում երևցնել անձիդ վրա, դլօ ես կանչում, փող ես փչում, անուշ եղանակելով ոչխարն ես կանչում՝ որ ցրուն եղած, մէկ փ!շը մի կողմ է հեռացած՝ միւսը միւս. կամ չարքաշ և քմահաճ այծը անդնդի վրա թռչտուող ժայռի գլխէն իջեցնելու համար քու խելքովդ քրդանակ յիշոցներ ես հանում, որ ինքդ էլ չես հասկանում ու քեզուքեզ վրէդ ծիծաղում ես: Աւելի էի մարդ զգում ես ինձ, երբ խոր աշունքի մշուշը պատած

մոլեռանդ բնաւորութիւնն է: Երիտասարդութիւնը աշխատում է այն, գիտակցաբար և ուղիղ նպատակայարմար ճանապարհով, բայց հոգևորական դասը, կողմնակի կերպով վնասում է այդ գործին, որպէս զի ժողովրդի ինքնաճանաչութիւնը չը զարթնի, և յանկարծակի չը պահանջէ նրանից այն հաշիւը, որը նա իրաւունք ունի պահանջելու:

Կան, ի հարկէ բացառութիւններ, և այդ բացառութիւն կազմող հոգևորականք, իրաւամբ կարող են առաջնորդ կոչվելու, և հոգևոր և մարդկային ճանապարհի մէջ: Հոգևորական դասից ազգը պահանջում է շատ իրաւացի և չափաւոր գործունութիւն, այն է աջակցութիւն երիտասարդական խմբին: Մի քաջալերական և խրախուսական խօսք, մի անկեղծ ազգասիրական արտայայտութիւն, մի ճշմարիտ հոգևոր խօսք, թէ «բոլորդ Աստուծոյ խօսքին համեմատ եղբայր էք, և ազգութեամբ մի:» Հոգևոր առաջնորդի նպատակը պէտք է լինի խաղաղութիւնը, և եղբայրական սէրը, որը պէտք է ներշնչէ նա ազգային մարմնի մէջ: Այն ժամանակ հոգևոր դասակարգը կը լինի կատարեալ անդամ պատուելի քրիստոնէական ժողովի մէջ, և նախամեծար անդամ ազգային միացեալ դերդաստանի մէջ: Հեռու չէ ժամանակը, հեռու չէ վերջնական բօպէն, երբ ժողովուրդը կը զարգանայ ինքնաճանաչութեամբ և այն ժամանակ, հեշտ չի լինի ուղղել անցեալ սխալը:

Այժմ հայը կարօտ է, ոչ թէ անդործ և լոկ անուամբ հայերի, այլ կատարեալ գործողների, և Կովկասի հայը պէտք է ցոյց տայ թէ նա արժան է հայութեանը, արժան է բարոյապէս պաշտպան լինել իր ընկճված եղբայրների: Եւ այդ քայլը մեզանում կարելի կը լինի անել կրօնական ներողամտութեամբ և անկեղծ եղբայրական զգացմունքով:

Պետրոս Բէպուրեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

22 սեպտեմբերի

Վանի սովատանջների օգտին հանգանակել եմ բարեկամներից 50 ր. 40 կ.: Փոստի ծախքը 40 կոպ. դուրս գալով, ուղարկում եմ ձեզ մնացածը և խնդրեմ ընդունել, տպելով նուիրատու անձանց անունները «Մշակի» էջերում:

Ղուկաս Խաչատուրեանց 3 ր. 20 կ., Վանեցի Յակոբեանց 2 ր., Կարապետ Մանուելեանց 2 ր., Զաւատ Գրիգորեանց 1 ր. 50 կ., Сергѣй Тураговъ 2 р., Նիկոլայ Դանիէլեանց 1 ր., Захаръ Бабеловъ 1 р., Թէոս Ղուկասեանց 2 ր., Իսահակ Պարունեանց 3 ր., Զաքարայ Հայրումեանց 1 ր. 20 կ., Մարտիրոս Տէր-Մաթէոսեանց 1 ր., Միխայէլ Տէր-Պողոսեանց 1 ր., Զաւատ Նալբանդեանց 1 ր., Константинъ Статевъ 1 р, Իսահակ Սարգիսեանց 1 ր., Ստեփան Մաղմանով 1 ր., Մէլիք Մուսայեանց 1 ր., Александръ Струсевъ 50 կ. Նիկոլայ Ալախանեանց 1 ր., Պօղոս Հայրապետեանց 50 կ. Աւետիս Բաղիրեանց 1 ր. Սարգիս Ստեփանեանց 50 կ., Օհանջան Շահկիտանեանց 2 ր., Թարխան Տէր-Մանուէլեանց 1 ր. Ալէքսանդր Սյմոզեանց 1 ր., Ներսէս Կարդանեանց 1 ր., Սողոմոն Սողոմոնեանց 1 ր., Յարութիւնի աղդասարեանց 50 կ., Սէրգէի Մուրադեանց 1 ր., Զաւատ Ղևանտեանց 2 ր., Ալլահվերտի Եղիեանց 1 ր., Սամուէլ Համբարցումեանց 1 ր., Համբարձում Տիրօղեանց 1 ր., Մկրտիչ Եսայեանց 1 ր., Միքայէլ Առաքամեանց 1 ր, Յովսէփ Խօսրովեանց 1 ր., Մարտիրոս Մանուկեանց 1 ր,, Յովակիմ Մուրադեանց 1 ր., Շաքար Թումայեանց 50 կ., Առաքէլ Աղաբաբեանց 1 ր., Յակոբ Յարութիւնեանց 50 կ., Պողոս Հայումեանց 1 ր., Գիւլամբար Սանտուրեանց 50 կ.: Ընդամենը 50 ռուբլ:

Ղուկաս Խաչատուրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք ՓՕԹԻԻՑ պ. Կարապետ Պապովից 2000 ռուբլ, որից կէսը յօգուտ «Միացեալ ընկերութեան», կէսն էլ յօգուտ Վանի սովեալների: Այդ գումարը ստացանք Ծովեանեանց եղբայրների ձեռքով Թիֆլիսում:

—

Հոկտեմբերի 4-ին, առաւօտեան ժամը 6-ին, ՀԱՒԼԱԲԱՐԻ սուրբ Մինաս կոչված թաղում, փողոցի մէջ, աւազակները բռնելով մի մրգավաճառի, կամենում են խեղդել Նրան և կողոպտել: Պատահմամբ ճանապարհով անցնում է մի տիրացու, աւազակները տեսնելով Նրան փախչում են, տանելով իրանց հետ մրգավաճառի քամարը և ժամացոյցը: Մրգավաճառը վիրաւորված է:

—

ՅԻՒՆՎԱԼԻՑ մեզ հաղորդում են, թէ այնտեղ և Շրվինդիս գիւղերում սաստիկ կարկուտ է եկել և մեծ վնասներ է պատճառել: Շրվինդիսում վեց տուն կործանվել է կարկուտից առաջ եկած փլեղից:

—

Մեզ հաղորդում են, թէ պ. Սարումեանցը մըտադիր է ՀԱՒԼԱԲԱՐՈՒՄ նուիրատուութիւններ հաւաքել յօգուտ Վանի սովատանջների: Ժողովուրդը խիստ համակրութեամբ է վերաբերվում դէպի պ. Սարումեանցի ձեռնարկութիւնը:

—

Հոկտեմբերի 5-ին մի քանի երիտասարդներ նաւակի վրա գիշեր ժամանակ քէֆ են անելիս եղել, պտըտելով Կուր գետի վրա: Նրանցից մի քանիսը հարբում են, և միմեանց հետ կռուելով, ընկնում են գետի մէջ և խեղդվում:

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են. հոգևոր ուսումնարանի այժմեան հոգաբարձութիւնը շատ աշխատում է, որ ընկած ուսումնարանը կըրկին վերականգնեցնէ. վարձված են ուսուցիչներ և վարժուհի բաւարար ռոճիկներով. դասատուութիւնը սկսվել է:

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. չը նայելով, որ այս գիւղը բազմաթիւ գիւղերի կենտրոն է համարվում, բայց ոչ մի դպրոց չունի: Մի տիրացու միայն հաւաքել է իր շուրջը մի քանի երեխաներ և Նրանց հետ ոչ այնքան պարապում է, որքան զբաղեցնում է իր տնային գործերով: Գիւղի հասարակութիւնը մեծ բաղձանք ունի մի կանոնաւոր դպրոց հիմնելու, բայց չունի մի առաջնորդ՝ որ նրան ցոյց տար, թէ ինչ ձևով և ինչ միջոցներով պէտք էր հիմնել դպրոցը: Շատերը սպասում են թեմական տեսչի այցելութեանը, բայց թեմական տեսուչները այդպիսի խուլ տեղերում ոտք չեն կոխում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԳՕԼՈՍ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Էրզրումից «Գօլոս» լրագրին գրում են հետևեալը սեպտեմբերի 23-ից:

Ինչպէս երևում է, թիւրքերի երախտագիտութեան զգացմունքը երբէք չի կորցնի իր բացասական յատկութիւնները. ռուսների մեծահոգութեան շնորհիւ ահա երկու տարի է, ինչ թիւրքերը օգուտ են քաղում վառելու և շինութիւնների փայտից Սողանլուխի անտառից, որ ռուսներին է անցել: Մինչդեռ ռուսաց հպատակների նամակները չեն հասնում Ռուսաստան և, ինչպիսի բովանդակութիւն էլ ունենան նրանք, մի և նոյն է, բռնվում են թիւրքաց փոստի մէջ և ոչնչացնվում: Թղթակցութիւնների հետ այդպէս անողորմ վարվելու առաջը կարելի է առնել միայն այստեղի ռուսաց հիւպատոսի շնորհիւ, որ ժամանակ առ ժամանակ ուղարկում է Սարիկամիշ մի առանձին մարդ ռուսաց փոստը բերելու համար: Ահա այդ մարդը ազատում է մեզ թիւրքաց պաշարումից, մեր նամակները ամբողջութեամբ ռուսաց փոստատանը յանձնելով: Թիւրքերը նոյնքան շնորհակալ գտնվեցան դէպի ռուսները և այն գերիների վերաբերութեամբ, որոնք անցեալ պատերազմի ժամանակ մի քանի տեղ բռնվեցան: Խաղաղութիւնը հաստատելուց յետոյ յայտնվեցաւ, որ բոլոր ռուս գերիները կոտորվեցան «Հայրենիքի կարօտից»:

Մեր նամակների վիճակին են ենթարկվում նոյնպէս և Ռուսաստանից մեզ ուղարկված թղթակցութիւնները. թէ ռուսաց և թէ հայոց պարբերական բոլոր հրատարակութիւնները, բոլոր մասնաւոր նամակները, որոնք հիւպատոսի թղթատարի ձեռքը չեն ընկնում, հէնց որ անցնում են թիւրքաց սահմանը, բռնվում են սահմանների պահապաններից և, իբրև հեշտութեամբ այրվող նիւթ, գործ են ածվում կաֆէ եփելու համար: Այժմ հարց է ծագում, թէ միջազգային ո՞ր իրաւունքի վրա է հիմնվում բարեկամ կառավարութեան հպատակներին պաշարված դրութեան մէջ պահելը:

Որովհետև թիւրք-ռուսական մասնաժողովը դեռ ևս չէ որոշել սահմանագիծը և որովհետև կանոնաւոր յարաբերութիւններ չեն հաստատված երկու կողմերի պահապան կենտրոնատեղիների մէջ, բաւական շատ անկարգութիւններ են կատարվում: Սրա պատճառը այն է, որ երկու կողմերի գործակատարները ժամանակաւոր և անորոշ պարտաւորութիւններ ունենալով, ամեն տեսակ անկարգութիւն միմեանց վրա են դցում: Ուրեմն շատ ցանկալի է, որ շուտով կանոնաւորվեն սահմանները և այնպիսի մարդիկ կանգնեցնեն, որոնք պիտանի լինեն սահմանական պահապանների պարտաւորութիւնները կատարելու համար:

Նոյնքան որոշ և խիստ կանոններ պէտք է ստեղծել հողատէրերի համար, որովհետև թիւրքերից շատերը ռուսաց սահմաններից թիւրքիա գաղթելով և չը կամենալով իրանց հողերը էժան գնով ծախել, իրանց հողերի համար առանձին կառավարիչներ են նշանում էին, միւսի մէջ խոզանն ու քակորը փոքր ներսով վառում ու դրսանց դարձեալ կալնում՝ որպէս զի մաւխը գեռնափոր լաբիրինթոսի մէջ բանդուի և իւր զօրութիւնը ազդեցնէ նենգաւորին. երբ ապա դռները բաց էինք անում, եթէ տանուտէրը ներսն էր եղած եղել, տեսնում էինք որ սորա կամ նորա առջև ոտքերը պարզել ու չարթընալու քունն է քնել: Երբեմն էլ աւելի ազնիւ էինք վարվում. ծակամուտ շունն էինք ներս ուղարկում, բաց զօրութիւն բաց զօրութեան դէմ կռիւ մենամարտութեան վերջը լինում էր աղուէսի կամ փախուստը կամ անկումը: Շունը կունեն ար քիթն ու ճիրանները արիւնլուիկ:

«Բայց հեռաւոր դաշտերում, դարևանդներու վրա, ուր ամայութիւնն է տիրում, ուր երկնքի հաւքն է նստած կամ աւերակի քարակոյտի վրա կամ վախուտ ժայռի գլխուն, ուր փլատակներու մէջ վայրի խոտն է խռուացած մնացած՝ կամ ցարսին ցախ դարձած. երբ հօտդ փռման գնում է, բայց այնքան յամր՝ որ հաղիւ նշմարում ես շարժումը. երբ աչքդ աշնանային պարզ օդի մէջ նայում է դէպի երկնոլորտը և կարծում ես օդային բանակներ տեսնել որ խաղում են տեսութեանդ առջև ու ծփալով յառաջ են գնում և հատնում չունին. երբ արդէն թմբրութեանը մօտ հասած ճանճի երկայն ու քարակ և եղերաձայն բզզիւն ես լսում, կամ ճպուռի ընդհատ ընդհատ և նուաղկոտ ձայնով ճռոցը դերբովիներու միջէն, երևակայութիւնդ վերանում է՝ թափառ գնում է ինչպէս և այն օդային բանակները: Բայց ինչ է մանուկ հովուի երևակայութիւնը այն յաւիտենական լուռ և յօնքերը անդունդի վրա կախած ժայռերու տակ կամ համրացած մնջացած աւերակներու փոսերու մէջ, ուր ինքն իսկ երկնոտ նապաստակը յանկարծ ոտքիդ տակէն ցնորքի նման փախչելովը իւր հետքեզ էլ է լեղապատառ թողնում: Ծողովվում էինք իրար գլխու. միջներէս մէկը նստած, միւսներս բոլորմնի իւր շուրջը, որ փորի վրա երկնցած ու դնչերս ձեռքերու մէջ առած ու աչքերս նստողի վրա տնկած, որ էլ կողքի ընկած ու մէկ ձեռքի վրա գլխներս դրած, որ՛ն էլ կանգնած, փայտը առջևը իբրև նեցուկ զարկած, այնոր ծայրին ձեռները դըրած ու ձեռներու վրա կուրծքը հանգչեցուցած, ամենքս աչք ու ականջ եղած՝ մեր ընկերոջ շըրթներէն, այսպէս ասեմ, կախուած մնում էինք: Նա պատմում էր մեզ օձերու թագաւորութիւնը, նոցա բանակ կազմելները, աշխարհէ աշխարհ իրար վրա կռիւ երթալը, թագաւոր կամ թագուհի օձի կառքի դղրդոցը արշաւի ժամանակ կամ հանած շաչիւնն ու շչիւնը՝ որովհետև հպատակ օձեր են նորա կառքը կազմողները և քաշողները, կառքի իւր ետևից թողած խորափոր հետքերն ու փոշու ամպը, թշնամիներու իրար տուած սոսկալի կռիւն ու ջարդը՝ ուր դէնքը գլխաւորապէս նոցա երկթիղ լեզուն է եղել, յետոյ ճորերու միջէն արեան հեղեղի գոչալով թաւալուիլն ու գնալը...: Պատմողը հարազատ էր. ասում էր թէ մշեցի կամ վանեցի կամ ես ինչ գիտեմ ինչ երկրացի մի մարդ է տեսած եղել այդ անցքը: Մի ուրիշ ընկեր առաջինի տեղն անցնելով հեքեաթ էր անում ջատու պառաւներու դիւական արարքները: Մի երրորդը զրոյց էր անում թէ ինչպէս այս անուն պառաւը այն ինչ աւերակի կամ քարափի մօտ մի սալ քարի վրա (ներեցէք պէտք է ասեմ) շռել ու նստել քըթումի է արել և լսել է որ քարի տակէն ձայն է գալիս. այն քարի տակ խաղնա՝ գանձ է եղել թաղուած: Լոյս աշխարհի ու մութ աշխարհի հեքեաթներուն վերջ կայ: Բայց ոչխարը մեզ կանչում էր. գնում էինք: Զեմ մոռանում թէ ինչպէս ժայռ, աւերակ, օձ, անյայտ գանձ, պառաւ, դև՝ իրար հետ վազում էին մեր երևակայութեան մէջ:

(Կը շարունակվի)

էր չորս դէս. արկածի էի սպասում, ուստի փոքրիկ հօտս միշտ աչքիս առջև էի պահում. մերթ ընդ մերթ կարճիկ սուլելով շունս մօտս կանչում և այդպէս նորան միշտ արթուն բռնում պարագայի կարևորութիւնը ստիպում էր որ ընկերներս իրարից անբաժան մնանք այդպիսի ժամերում. ինչքան էր լինում մեր զուարճութիւնը՝ երբ աւելի վտանգաւորին սպասած ժամանակներս յանկարծ սատանայ Թէոդորոսն*) էր ձեռն այսուայն կողմ փարտելով աչքերս երևում, կամ երկչոտ լապտրակը (նապաստակ) ոտքերս տակէն պրծնելով լեղապատառ փախչում սաստիկ արագութեամբ և ականջներովը խայտառակուած: Բըրդոտ հօտի երդուեալ թշնամին ուշ ուշ էր երևում ցածր տեղերում, բայց երևում, մշուշն ստէպ երևնդոտ հօտի երդուեալ թշնամին ուշ ուշ էր երևում ցածր տեղերում, բայց երևում, մշուշն ստէպ երևնում էինք, միւսի մէջ խոզանն ու քակորը փոքր ներսով վառում ու դրսանց դարձեալ կալնում՝ որպէս զի մաւխը գեռնափոր լաբիրինթոսի մէջ բանդուի և իւր զօրութիւնը ազդեցնէ նենգաւորին. երբ ապա դռները բաց էինք անում, եթէ տանուտէրը ներսն էր եղած եղել, տեսնում էինք որ սորա կամ նորա առջև ոտքերը պարզել ու չարթընալու քունն է քնել: Երբեմն էլ աւելի ազնիւ էինք վարվում. ծակամուտ շունն էինք ներս ուղարկում, բաց զօրութիւն բաց զօրութեան դէմ կռիւ մենամարտութեան վերջը լինում էր աղուէսի կամ փախուստը կամ անկումը: Շունը կունեն ար քիթն ու ճիրանները արիւնլուիկ:

«Բայց հեռաւոր դաշտերում, դարևանդներու վրա, ուր ամայութիւնն է տիրում, ուր երկնքի հաւքն է նստած կամ աւերակի քարակոյտի վրա կամ վախուտ ժայռի գլխուն, ուր փլատակներու մէջ վայրի խոտն է խռուացած մնացած՝ կամ ցարսին ցախ դարձած. երբ հօտդ փռման գնում է, բայց այնքան յամր՝ որ հաղիւ նշմարում ես շարժումը. երբ աչքդ աշնանային պարզ օդի մէջ նայում է դէպի երկնոլորտը և կարծում ես օդային բանակներ տեսնել որ խաղում են տեսութեանդ առջև ու ծփալով յառաջ են գնում և հատնում չունին. երբ արդէն թմբրութեանը մօտ հասած ճանճի երկայն ու քարակ և եղերաձայն բզզիւն ես լսում, կամ ճպուռի ընդհատ ընդհատ և նուաղկոտ ձայնով ճռոցը դերբովիներու միջէն, երևակայութիւնդ վերանում է՝ թափառ գնում է ինչպէս և այն օդային բանակները: Բայց ինչ է մանուկ հովուի երևակայութիւնը այն յաւիտենական լուռ և յօնքերը անդունդի վրա կախած ժայռերու տակ կամ համրացած մնջացած աւերակներու փոսերու մէջ, ուր ինքն իսկ երկնոտ նապաստակը յանկարծ ոտքիդ տակէն ցնորքի նման փախչելովը իւր հետքեզ էլ է լեղապատառ թողնում: Ծողովվում էինք իրար

*) Խորամանկ աղուէսը:

նակում, որոնք չեն հոգում հողերը մշակելու մասին և պարապ նստած են, սպասելով հողերի գնի թանգանալուն, որ յետոյ ծախսեն նրանց: Այդ հանգամանքը անկասկած վատ է ազդում երկրի տնտեսական դրութեան վրա, որովհետև հողերը անմշակ են մնում:

Միւս կողմից ի նկատի ունենալով Եւրոպայի միջամտութիւնը հայոց խնդիրը լուծելու համար, ռուսահպատակ հայերից շատերը ցանկանում են անշարժ կալուածքներ ձեռք բերել Ռուսաստանի սահմաններին մօտ եղած Թիւրքաց Հայաստանի մէջ, որ անկասկած Ռուսաստանի համար քաղաքական կողմից շատ օգտաւէտ է: Մինչդեռ Թիւրքաց կառավարութիւնը, չը կամենալով, որ իր երկրի մէջ ռուս հպատակներ լինեն, աշխատում է Հայաստանից դաղթող Թիւրքերին անգլիացի դաղթականներով փոխարինել: Այդ նպատակին հասնելու համար Թիւրքաց կառավարութիւնը մի կողմից արգելքներ է դնում, որ ռուսահպատակները կալուածներ գնեն, իսկ միւս կողմից Լօնդօնի մէջ եղած իր դեսպանի օգնութեամբ պայմանաւորվում է անգլիացի հողատէրերի հետ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ ռուսները որքան են ցանկանում Այբիսնի շէկ գաւակների հարևանութիւնը, ուրեմն Հայաստանի հիւսիսային մասը կազմակերպելու ժամանակ հարկաւոր է նոր կանոններ մշակել ռուսահպատակների իրաւունքները ապահովելու համար:

Որովհետև խօսեցինք Թիւրքերի Հայաստանից Փոքր-Ասիայի խորքերը դաղթելու մասին, կը նկատենք, որ այդ դաղթականութիւնը կապված է մի քանի ծիծաղելի դէպքերի հետ: Օրինակ հայերը նկատելով Թիւրքերի ձգտումը դաղթել Հայաստանից, լուր են տարածում, որ քրիստոնեայ նահանգապետ նշանակելուց յետոյ իրանք թոյլ չեն խնդրեն խոզեր պահել և նրանց մորթել: Հեշտ է երևակայել մահմեդականի սարսափը ամեն բան ուտող այդ չորքոտանիի անունը լսելու ժամանակ: Միւս բանը, որով հայերը վախեցնում են Մահմեդի որդկերանցը, եկեղեցիների զանգակներն են: Մի քանի հայեր ինձ հաւատացնում էին, որ բաւական է Հայաստանի Թիւրքաբնակ քաղաքներից մէկի մէջ մի զանգակ բերել և զանգահարել, իսկոյն այդ քաղաքը կը թողնեն բոլոր մօլլաները և նրանց հետևորդները: Այդ պատճառով անդադար պատմում են Թիւրքերին, որ Մոսկվայի մէջ ահագին զանգակներ են շինվում Երզրումի և միւս քաղաքների համար և հէնց որ քրիստոնեայ նահանգապետ կը նշանակվի այդ զանգակները Հայաստան կը բերվեն:

Սաղանլուխի անտառը Ռուսաստանին անցնելուց յետոյ վառելափայտի այնպիսի պակասութիւն է զգացվում, որ օղիի գործարանները դադարեցրին իրանց աշխատանքները, որովհետև վառելափայտը չափազանց թանգ է: Նաւթի արդիւնաբերելը շատ դժուար է, թէպէտ Հասան-Ղալայի շրջակաները լիքն են նաւթով: Դրա պատճառը այն է, որ եթէ կանոնաւոր ընկերութիւն կազմվի նաւթ արդիւնաբերելու համար, նա ստիպված կը լինի իր դումարի կէսը ընծայել զանազան փաշաներին և Թիւրք պաշտօնեաներին: Արհեստական անտառի անկելը, խարբերդցի հայերի նման, որոնք բացառապէս գինեգործութեամբ են զբաղվում, նոյնպէս դժուար է, որովհետև Երզրումի նահանգի օդը և հողը անձեռնտու պայմաններ են ներկայացնում այդ գործի համար:

Ահա այդպիսով քրիստոնեայ ազգաբնակութեան բոլոր օգտաւէտ ձեռնարկութիւնները և աշխատանքները, անցեալ դարերի նման, անպտուղ են մնում վարչութեան և կառավարիչների կամայականութեան պատճառով, որոնք ազգաբնակութիւնը կթան կով են համարում, այն պայմանով միայն, որ այդ կովը մինչև անդամ չը համարձակվի հարկաւոր կերակրի մասին մտածել:

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները: Անգլիան պատրաստվում է ստիպողական միջոցներ գործադրել Թիւրքիայի դէմ: Դրա մասին Պօրտսմուտից հաղորդում են հետևեալ լուրերը: Ծովապետ Սէյմուրին ուղարկվում է «օգնական» բեռնակիր նաւ, որի վրա պէտք է միշտ զօրքեր լինեն: Այդ նաւով կուղարկվի 50 տօնն պատերազմական պաշարներ և 54 Գեատլինգի միտրալեօզ: Բայի այս Լօնդօնից հեռագրում են, որ ծովապետ Սէյմոր հրաման ստացաւ իր կառավարութիւնից՝ բանակցել Իբրահիմ պետութեան նաւերի հրամանատարների հետ առանձին առանձին և երևի այդ բանակցութիւնների ժամանակ անգլիական ծովապետը կը հաղորդի միւսներին այն նոր հրամանները, որ նա ստացել է իր կառավարութենից:

Անգլիական ազատամիտ կուսակցութեան լրագիրներից մէկը, որ միջոց ունի հաստատ տեղեկութիւններ ստանալ, հաղորդում է մի քանի լուրեր, որոնք հաստատում են վերոյիշեալը: Այդ լրագիրը պնդում է, որ պետութիւնների մէջ կատարեալ և վերջնական համաձայնութիւն է կայացել Թիւրքիայի դէմ ստիպողական միջոցներ գործադրելու մասին և որ Էգէյեան ծովի մէջ թշնամական գործողութիւններ կը սկսվեն: Պետութիւնների վճռի իրագործելը կը յանձնվի ոչ թէ ամբողջ միացեալ նաւատորմին, այլ գոնէ երեք պետութիւնների նաւերին, որոնց ազգութեան մասին ոչինչ տեղեկութիւններ դեռ ևս չը կան և որոնք կը գործեն իբրև Եւրոպայի հաւատարմատարներ:

Միևնոյն ժամանակ Ցեռմիսիից հաղորդում են, որ Հերզեգովինական կառավարութիւնը մտադիր է ամենակարճ ժամանակամիջոցի մէջ պատերազմ սկսել Թիւրքիայի դէմ: Այդ հանգամանքը շատ հասկանալի է: Եթէ Էգէյեան ծովի մէջ կերևան «Եւրոպայի ընտրած նաւերը, Հերզեգովինները գործ կունենան Թիւրքաց այն զօրքերի հետ միայն, որոնք արդէն Այբանիայի մէջ են, որովհետև Թիւրքաց կառավարութիւնը անկարող կը լինի օգնական զօրքեր հասցնել Փոքր-Ասիայից:

Այսպիսով արևելեան գործերը հասնում են վճռողական բոպէին: Եթէ սուլթանը և նրա կառավարութիւնը իր ժամանակին խելքի չեն դայ, նրանք սաստիկ կը պատժվեն այն յանդգնութեան համար, որով վարվեցին Եւրոպայի հետ: Մանաւանդ նշանաւոր է «հաւատարմատար» նաւերի ուղարկելը Էգէյեան ծովը, որոնք անկասկած որոշ և վերջնականապէս վճռված գործողութիւնների նախադիծ կունենան: Այնուհետև ոչ մի փորձ չի աջողվի Եւրոպական համաձայնութիւնը խանգարելու համար: Բ. Դուռը այնուհետև գործ կունենայ նոր կազմակերպված պատերազմական նաւատորմի հետ և որովհետև նաւատորմի հրամանատարը անկասկած անգլիացի ծովապետ կը լինի, կարելի է նախապէս ասել, թէ ինչ հետևանքներ կունենան արևելեան գործերը, որոնց վճռելու համար անգլիական կառավարութիւնը միտրալիօզներ և զօրքեր է ուղարկում Մի-ջերկրական ծովը:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 20 սեպտեմ.

Սօվուկ-Բուլախի քրդերի ապստամբութեան արմատը պէտք է որոնել շատ խոր թաղված մի ծածուկ դաւադրութեան մէջ, որի տեղենակութիւնը, անտարակոյս, պէտք է վերաբերել Թիւրքիային:

Մի քանի ամիս առաջ Կ. Պոլսում գտնվում էր պարսից Սօվուկ-Բուլախ քաղաքից մի քուրդ ազնուական, Համզա-աղա անունով, որը Մանգուռների ցեղապետն էր: Նրան պատում էին Կ. Պոլսում իբրև կալանաւոր, բայց ինչ էր նրա յանցանքը, ինչ բանի համար էր բերված նա,— ոչ ոք չը գիտէր: Այսքանը միայն յայտնի էր, որ Համզա-աղան յարաբերութիւն ունէր Թիւրքաց բարձր շրջանների հետ և յաճախ տեսնվում էր առաջին վէզիրի հետ:

Երբ Բերլինի վերջին կոնգրէսից յետոյ հայկական հարցը անցաւ Յունաստանի և Հերզեգովինայի հարցերի կարգում, այդ ժամանակ Համզա-աղան մի հրաշքով յայտնվեցաւ Սօվուկ-Բուլախ քաղաքում: Նա սկսեց, ի հարկէ ծածկաբար, դրդռել պարսկաստակ քուրդ ցեղապետներին մասնակցել մի ընդհանուր քրդական ապստամբութեան, որ պատրաստվում էր Թիւրքաց սահմանակից հողի վրա Շէյխ-Իբրահիմի առաջնորդութեամբ: Եւ այսպիսով, Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանակից քրդերը միախառնվելով, պիտի դազմէին մի ահագին զօրութիւն, որի նպատակը պէտք է լիներ արշաւանք գործել դէպի Հայաստան:

Բայց հանգամանքները գործին ուրիշ տեսակ ձև և ընթացք տուին:

Համզա-աղայի ապստամբական պատրաստութիւնները չէին կարող ծածուկ մնալ Սօվուկ-Բուլախի Նահզադէի արքայազն Նահանգապետի ուշադրութիւնից: Նա կանչել է տալիս իր մօտ Համզա-աղային, և դնելով նրա առջև մի շղթայ, ասում է. «դու մեր կառավարութեան առջև յանցաւոր ես, վեր առ այդ շղթան և քո ձեռքով անցկացրու քո պարանոցը:» Նահզադէի անզգոյշ վարմունքը իսկոյն պատժվում է: Համզա-աղան փոխանակ հնազանդվելու նրա հրամանին, մերկացնում է սուրը, և դուրս պրծնելով Նահզադէի սենեակից, ասում է, «իմ պարանոցը պարսկական շղթային չի համբերի»....Մերձաւորներից ոչ ոք չէ համարձակվում բռնել ստահակին: Նահզադէի դրանը կանգնած երկու պահապան սարվազները կամենում են արգելել նրա փախուստը, բայց երկուսն էլ ընկնում են քրդի սրի տակ:

Մինչև այդ անցքը Համզա-աղան արդէն կարողացել էր յաջողացնել գործը, միաբանելով իր հետ տեղային մի քանի նշանաւոր քուրդ ազնուականներին, որոնց հետ մի քանի հազար զինեալ ձիաւորներով անցնում են պարսից սահմանը և խմբվում են Թիւրքաց հողի վրա: Այնտեղ պարսկական քուրդ ապստամբները միանում են Շէյխ-Իբրահիմի վաղուց արդէն պատրաստած Թիւրքական քուրդ ապստամբների հետ: Շէյխ-Իբրահիմը ապստամբների ընդհանուր հրամանատարութիւնը յանձնում է իր Շէյխ Գադր որդուն և յիշեալ Համզա-աղային: Ապստամբները թւով մինչև 5,000, ըստ մեծի մասին զինված Մարտինի հրացաններով, անցնում են Թիւրքաց սահմանից դէպի Պարսկաստան: Նրանց առաջին գործը լինում է յարձակվել Սօվուխ-Բուլախ գիւղաքաղաքի վրա, որին առանց ընդդիմադրութեան տիրում են, որովհետև պարսիկները այդ կողմերում զօրք չունէին:

Երբ այդ լուրը հասնում է Սարպատականի մայրաքաղաքը, Թաւրիզ, տեղային պարսից կառավարութիւնը խիստ արհամարհանքով է վերաբերվում դէպի քրդերի շարժումը, համարելով այն սովորական ասպատակութիւններից մէկը, որ քրդերը համարեա ամեն տարի գործում են Թիւրքաց պարսկական սահմանի գծի վրա: Այդ պատճառով քրդերին զսպելու համար պարսից կողմից ուղարկվում է խիստ աննշան թւով հեծելազօր և մի քանի թնդանօթներ միայն, որոնք ճանապարհների վատութեան և ամեն տեղ կամուրջներ չը լինելու պատճառով, մինչև հասնելը, թշնամին արդէն տիրած է լինում Սօվուխ-Բուլախ քաղաքը և անցած է լինում Բենաբի գաւառը: Այստեղ քրդերը և պարսիկները հանդիպում են միմեանց: Պարսիկները լաւ պատրաստված չը լինելով, և թւով համեմատաբար փոքր լինելով, յաղթվում են: Ոգեորված այդ յաջողութեամբ, քրդերը սկսում են իրանց արշաւանքը առաջ տանել դէպի Մարաղայ, որ այնտեղից անցնեն հարուստ Թաւրիզ կողոպտելու:

Թաւրիզի փոխարքան (որ Շահի թագաժառանգն է) նոր է հասկանում, որ քրդերի արշաւանքը կատակ չէ, պէտք է լուրջ ձեռնարկութիւնների դիմել նրանց զսպելու համար: Նորից ուղարկվում են բաւական մեծ թւով հեծեալ և հետևակ զօրք: Թէև հետևանքը տակաւին յայտնի չէ, բայց տարակոյս չը կայ, որ պարսիկները վերջապէս կը ջարդեն քրդերին, դժբաղդաբար մի քանի գաւառներ նրանցից աւերակ դառնալուց....

Այդ ապստամբութեան գլխաւորը, ինչպէս յիշեցի Շէյխ-Իբրահիմն է, մի ֆանատիկոս հոգևորական, որ ամբողջ քանի տարի է անպատիժ կերպով աւերում է Հայաստանի արևելեան գաւառները: Դա մի յարմար գործիք է Թիւրքիայի ձեռքում ամեն տեսակ եղեռնագործութիւնների համար: Թէ ինչ յարդանք է վայելում այդ հոգևոր աւազակը քուրդ ցեղերի կողմից, բաւական է այսքանը միայն յիշել, որ այն օրը, երբ շէյխը բաղնիք է գնում, քրդերը բաղնիքի ջուրը որպէս սրբութիւն բաժանում են իրանց մէջ և վարդաջուրի փոխարէն սրսկում են իրանց մօրուքի վրա:

Քրիստոնեաների այդ դահիճը ամեն տեսակ չարագործութիւններ կատարած է հայերի և ասորիների վերաբերութեամբ: Մի քանի տարի առաջ նա աւերեց մի հոյակապ և հին վանք նրա քարերը իր տան շինութեանը գործածելու համար: Այդ վանքի գաւթում նեստորականները սովորութիւն ունէին թաղել իրանց պատրիարքներին և եպիսկոպոսներին, նրանց դագաղների մէջ դնելով մի մի հատոր, մագաղաթի վրա գրված, Աստուածաշունչ գիրք: Նա քանդել տուեց բոլոր գերեզմանները, դագաղները այրեց, սուրը գրքերի հետ միասին: Մի և նոյն Շէյխ-Իբրահիմն էր, որ ռուս-Թիւրքական պատերազմի ժամանակ Աղտակի և Ալաշկերտի գաւառները անապատ դարձրեց, Հին-Բայազէդը հայերին կոտորել տուեց, Բարդուղիմէոս առաքեալի հարուստ վանքը կողոպտեց և առաքեալի սուրբ շիրիմը քանդել տուեց: Եւ այդ բոլորի փոխարէն ստացաւ շքանշաններ, մեծամեծ պարգևներ Ստամբուլից, ստացաւ եւրոպական զէնքեր և զինուորեց վայրենի քրդերին:

Այստեղ զանազան կերպով են բացատրում շէյխ ի այժմեան ապստամբութիւնները պարսից հողի վրա: Ոմանք ասում են, Թիւրքաց կառավարութիւնը, ստիպված լինելով Բերլինի դաշնագրի զօրութեամբ Ղօթուրը տալ Պարսկաստանին, այժմ կամենում է քրդերի ձեռքով յետ խլել եթէ ոչ Ղօթուրը, գոնէ պարսից այն գաւառները, որ բնակեցրած են քրդերով, որպիսիքն են Սօվուխ-Բուլախի և Սինէն: Ոմանք ասում են, Շէյխի արշաւանքը պատրաստված էր Թիւրքաց Հայաստանի համար, բայց նա ցանկալով, որ Պարսկաստանի քրդերն էլ միանան Թիւրքիայի քրդերի հետ, աշխատեց պարսից քրդերի մէջ ապստամբութիւն յարուցանել, որովհետև փարձով գիտէր, որ Պարսից կառավարութիւնը թոյլ չի տայ իր հպատակ քրդերին անցկենալ Թիւրքաց հողի վրա և Հայաստանում աւերմունք գործել *):

Թէ այսպէս թէ այնպէս, ամեն նշաններից երևում է, որ այս բոլոր գործողութիւնների մէջ խառն է Թիւրքիայի ձեռքը, եթէ ոչ, ով պիտի զինուորէր աղքատ քրդերին եւրոպական ընտիր զէնքերով, որտեղից և ինչ միջոցով ստացան այդ զէնքերը: Բացի դրանից, Շէյխ-Իբրահիմը յայտնի է, որպէս Թիւրքաց կառավարութեան մի լաւ գործիք և իր ծառայութիւններով շատունակ քսան տարի ապացուցել է այդ:

Տարակոյս չը կայ, որ Պարսից կառավարութիւնը քրդերին զսպելուց յետոյ, նրանց բոլոր վնասների և անկարգութիւնների մասին պատասխանատուութիւն կը պահանջէ Թիւրքիայից և այդ առիթ կը տայ դիւանագիտական մի նոր բանակցութեան արևելքի վերաբերութեամբ:

Թիւրքական Հայաստանը կը շահվի դրանից: Եւրոպան գուցէ այժմ կը հասկանայ, թէ ինչ են կրել խեղճ հայերը վայրենի քրդերից, որոնք յանդգնում են մինչև անդամ Պարսկաստանի նման մի հզօր պետութեան գաւառները անապատ դարձնել իրանց բարբարոսական ապստամբութիւններով:

***

*) Ռուս-Թիւրքական պատերազմի ժամանակ պարսից կառավարութիւնը ամեն միջոցներ գործ էր դնում, որ արգելէ իր հպատակ քրդերին անցկենալ Թիւրքաց հողի վրա, և միանալով Թիւրքահպատակ իրանց ցեղակիցների հետ, պատերազմել ռուսների դէմ. Նրանք որ դաղտնի կերպով անցան, վերջը սաստիկ պատժվեցան կառավարութենից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 82 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր. 50 կ., երկրորդ 212 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 8 ր. 12 կ., Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ 23,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 205 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 255 Ֆրանկ 50 սանտ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենտրոնական Գրավաճառանոցի հրատարակութեամբ այս օրերս լոյս տեսաւ Սահմանոս աւագ քահանայ Տէր-Ստեփանեանցի աշխատասիրած «Սկզբունք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեաց եկեղեցւոյ» դասագրքի երկրորդ ապագրութիւնը հետևեալ յաւելուածներով. համար. 11. Յակոբ Նահապետի որդիքը. 12. Յովսէփը բանտում. 13. Յովսէփի փառքը. 14. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս. 15. Յովսէփի եղբայրների երկրորդ գալուստը Եգիպտոս, 16. Թէ ինչպէս եղբայրները ճանաչեցին Յովսէփին. 17. Յակոբի Եգիպտոս տեղափոխուիլը:

Աղօթք վասն թագաւորի «Քաջի քո Քրիստոս», «Այսօր կանգնեցաւ և էջմիածինն ի Հօրէ» շարականները դասաւորված են իրանց տեղերում պատմութեան իմաստին համաձայն: Նկարագրութիւն ոտնալուայի հանդէսի ու թուարկութիւն ի պատիւ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի սահմանուած տօների: Գինը ըստ առաջնոյն 50 կոպէկ է:

Վերջապէս հարցմունքները, որոնք առաջին տպագրութեան մէջ զետեղուած էին իւրաքանչիւր յօդուածի ներքոյ, այժմ ամփոփուեցան գրքերի վերջումը առանձնապէս:

—

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է նոյն գրավաճառանոցում «Նոր դասագիրք թուաբանութեան» Գ. Վարձելեանի, գինն է 70 կոպէկ:

—

		Ր.	Կ.
1.	Ժողովրդական այբբենարան	—	5.
2.	Տէր-Ղևոնդեան Մայրենի լեզու ա. տ.	—	35.
3.	— — Մայրենի լեզու բ. տ.	—	40.
4.	— — Մայրենի լեզու գ. և դ. տ.	—	70.
5.	Աղջիկանց ուսումն Մայրենի լեզուի	—	15.
6.	Ս. Մանդինեան Նահապետական և Հայր. աշխահ.	—	60.
7.	— Ազգային քրիստոնական աշխարհ ա. տ.	—	25.
8.	— — Դիւցազանց. աշխարհ	—	30.
9.	— Ազգ. ու ընտան. աշխարհ ուսուցչաց ձեռնարկ	—	70.
10.	Տէր-Դաւթեան դասագիրք ռ. լ. Русское Слово	—	45.
11.	Այվազեան Գ. Ա. Ե. Նախակրթանք հ. լեզուի մ. ա.	—	40.
12.	Եղիշէ, պատմութիւն Վարդանանց	1.	—
13.	— Նոյն հասարակ կազմի վրա	—	20.
14.	Տէր-Սարգսեան հայերէն վայելչագրութեան օրինակ.	—	20.
15.	Պալասանեան Քերականութիւն Մայրենի լեզուի	—	50.

Վերոյիշեալ գրքերի գնողները «Կենտրոնական գրավաճառանոցից» նշանաւոր զիջումն են ստանում:

Մի մոլդավեցի պարոն, Յովհաննէս Եաղշեան, որ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ունին Վեհափառ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ, ցանկանում է ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԵԿԵՂԵՑԱԿԱՆ երգեցողութեան ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ստանալ: Հասցէն. Թիֆլիսի Հայոց կոնսիստորիա, հարցնել Յովհաննէս Եաղշեանին:

4—8

ՎԱՐՁՈՎ է տրվում 6 ՍԵՆԵԱԿ ԽՈՀԱՆՈՑՈՎ, ՆԵՐՔՆԱՏՆՈՎ և այլ յարմարութիւններով: Մանաւանդ յարմար է ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար: Նորաշենսկայա փողոց, Խակ ՓՈՒՂԻՆՕՎԻ տուն: Գնի մասին կարելի է նոյն տեղը տեղեկանալ:

2—2

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ տուացվեցաւ ՇՕԿՕԼԱԴ ԵՒ ԿԱԿԱՕ ՖՐԱՑ

9—20

Մախսվում է մի ՏՈՒՆ ԱՑԳԻՈՎ ԵՒ ԲԱԿՈՎ 450 սաժ. մեծութեամբ. գտնվում է ՎԵՐԱ, ԱՐՁԱՆԻ ՁԱԽ ԿՈՂՄԸ, բարձրութեան բա: Բացի այդ նոր [illegible] սաժ. ՀՈՂ միասին և մաս մաս:

3—3

Ռ. Կ. ԵՍԿՈՒԼՕՎ

ԵՐԴՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ յայտնում է իր կլիենտներին, որ նա փոխեց իր հին ԲՆԱԿԱՐԱՆԸ և այժմ բնակվում է Երևանսկայա փողոցի վրա, տուն Ակէկսանդր Բաբանասովի № 12:

2—3

ՎԱՐՁՈՎ տրվում է ՁՈՐՍ սենեակից բաղկացած մի բնակարան, խոհանոցով և ներքնատնով Օրբէլեանների փողոցի վրա № 4, ներքին յարկում, Յակոբ Դանդուրովի տան:

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ եռամսեայ պատկերազարդ հանդէսն կը հրատարակուի 'ի 1881 թուականին չորս անգամ, այն է՝ Յունուարին, Ապրիլին, Յուլիսին և Հոկտեմբերին: Նորա իւրաքանչիւր տետրը կը պարունակէ իւր մէջ 3—4 քառածալ թերթ 12—16 պատկերներով, նոյն ձևով, ինչպէս հրատարակուեցաւ մինչև ցայսօր:

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդէսի նիւթն, ուղղութիւնն, տպագրութեան գեղեցկութիւնն և պատկերաց ընտրութիւնն կը մնան անփոփոխ ինչպէս էին մինչև ցայժմ:

Տարեկան բաժանորդագրութեան գինն, հանդերձ առաքմամբ, է 5 ռուբլի կանխիկ վճարելի: Խմբագրութեան հասցէն այս է. Москва, Меньшикова башня, домъ Милованова, Ея Превосходительству Издательницѣ армянскаго журнала „Маякъ Арменіи“ Софьѣ Мсеріанцъ.

Ռուսաստանի Հայք կարող են բաժանորդ գրուիլ բաց 'ի խմբագրութենէն՝ նաև ներկայ ամի պատուելի գործակալաց մօտ, և ս և 'ի Տփխիս՝ Կենդրոնական և Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցներում, և Երևան՝ Պ. Աբգար Դուլամիրեանցի մօտ:

ԵԹԷ «ՓԱՐՈՍԻ» 1880 ամի պատուելի բաժանորդքն բարեհաճին նորոգել իւրեանց բաժանորդագրութիւնը և առաջիկայ 1881 տարւոյ համար՝ մեր հանդիսի հրատարակութիւնն ապահովված կը լինի:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՍՈՓԻԱ ՄՍԵՐԵԱՆՑ

1—10

ՎԼԱԴԻԿՕՎԿԱՍԵԱՆ ՕՂԻԻ գործարանապահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒԻ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետևեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՋԻ և ԲՈՒԼՄԵՐԻՆԳ: Շիշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամէն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՑՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, Յենտրալնայա հիւրանոցի տակ, Լիխատինսկու տանը, Վօրոնցովի արձանի դիմացը: 8—8 (2 շաբ.)

ՌԻՀԿԸՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վենէրական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ.. Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շտէյմբօրսկի վենէրական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գավրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Առաւաւոտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՕԿՏՕՐ ԵԱԿՈՒԲՕՎԻՉ շարունակում է ընդունել ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՍԻՖԻԼԻՍՏԻԱԿԱՆ հիւանդներին ընդունել երեքշաբթի օրերը առաւօտեան 11 ժամից մինչև 2 ժամը: Գօլովինսկի փողոց, Մուխրանսկու տուն: 2—6

Դուրս եկաւ մամուլի տակից «Մանկական ձայնագրեալ երգարան» խմբագրութեամբ Եղնիկ քահանայի Իրընկեանց: Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի: Ընդունուած է Ներսիսեան դպրանոցում և թեմական վերատեսչի բարեհաճութեամբ Տրփխիսի բոլոր ուսումնարաններում: Վաճառվում է բացառապէս Զ. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում». գինն է 40 կ., գումարով առնողներին զիջումն կը լինի: 2—10

Ֆ. Կ ԶԱՄԼԻՆՍԿՈՒ ԴԵՂԱՏԱՆ ԿԻՑ ՄԻԽԱՅԼՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ Տ. ԿՕՏՐԻՆԻ: Ամենայն օրը ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը ներքին, երեխայական, ջղային, վենէրական և կաշու հիւանդութիւններ ունեցող ՀԻՒԱՆԴՆԵՐԸ: 2—6

Ընդունում եմ ամեն տեսակ պատէրներ ԿՕՆՖԷԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒԽԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՕՆՖԷԿՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմտաբարցանկացողք կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով, Въ Тифлисѣ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ. փոստային կոնֆէկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Հախնազարեանց.

22—50

ՆՈՐ ՀԱՆԴԻՍ

ՖԻԼԻՊՕՎԻՉ ԵՒ ԸՆԿԼՈՒՍԱՆԿԱՐԻ չորս ամվայ գործունէութեան հետևանքները: (Առանձնապէս լուսանկարի համար կառուցած շինութեան մէջ): Գօլովինսկի փողոց, տուն Կ. Եա. Զուբալովի, Թիֆլիսի կրուրի մօտ: Բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը:

10—10

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետևեալ դասագրքեր.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.
3. Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . . 30 կ.
4. Նահապետական և Հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . 65 կ.



Կ. ՊԱՆՅԵՐ, ԱՏԱՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ տուն ՉՈՒՐԱԼՕՎԻ: Եկող ամառվայ սեզոնի համար առարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՉԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԵՌՔԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԵՐԻ, չափազանց էժան գներով, այսինքն Ձեռքի մեքենաներ 12—5 ռուբլ: Ոտքի 50—80 ռուբլ:



19—52

Дозволено цензурою Тифлисъ, 8 Октября 1880 г. Տպարան եղբայրք Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ